Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները և զարգացման հեռանկարները

- Բնության պահպանության և վերականգնման գործում բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ) առանցքային դերակատարում ունեն, քանի որ նպաստում են շրջակա միջավայրի վրա մարդածին ազդեցության նվազեցմանը, էկոլոգիական հավասարակշռության ապահովմանը, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանմանը: ԲՀՊՏ-ների կարևորությունն ու անհրաժեշտությունն ամրագրված է ,Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի 8-րդ հոդվածով, համաձայն որի յուրաքանչյուր երկիր պարտավոր է ստեղծել ԲՀՊՏ-ների համակարգ և ապահովել դրա կանոնավոր գործունեությունը:

Հայաստանի փոքրիկ տարածքի վրա (29,74 հազ. կմ2) հայտնաբերված են մոտ 3800 տեսակի բարձրակարգ անոթավոր բույսեր,
ավելի քան 17750 կենդանատեսակներ, որոնցից մոտ 549 -ը՝ ողնաշարավորներ:
Ցածրակարգ բույսերի և միկրոօրգանիզմների քանակությունն անցնում է մի քանի տասնյակ հազարներից:
Հայաստանի ֆլորայի էնդեմների թիվը կազմում է 144 տեսակ, որը նրա բուսական աշխարհի տեսակային ընդհանուր բազմազանության մոտ 3.8%-ն է, իսկ ֆաունայինը 500-ը, շուրջ 2.8 %-ը որոնցից 487-ը՝ անողնաշար կենդանիներ են:

ՀՀ գործող և նախատեսվող բնության հատուկ պահպանվող տարածքների քարտեզ-սխեմա



Հայաստանի պահպանվող տարածքները

Կարգավիակը	Քանակը	Տարածքը /հա/	%
Արգելոցներ	3	35469.3	**1.19 %**
Ազգային պարկեր	4	236802.1	**7.96 %**
Արգելավայրեր	27	114812.7	**3.95 %**
Բնության հուշարձաններ	232	-	-
Ամբողջ մակերեսը՝այդ թվում Սևանա լ. հայելին		**387084.1**	**13.1 %**

ՀՀ Բնապահպանության նախարարության ՊՈԱԿ-ների կազմում ներառված պահպանվող տարածքները

- <<Խոսրովի անտառ>>պետարգելոց>>ՊՈԱԿ-<<Խոսրովի անտառ>>պետարգելոց, <<Խոր Վիրապ>>, << Գոռավանի ավազուտներ>> արգելավայրեր
- <<Զանգեզուր կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ- <<Շիկահող>> պետարգելոց, <<Արևիկ>> ազգային պարկ, <<Սոսու պուրակ>>, <<Զանգեզուր>>, <<Խուստուփ>>, <<Սև լիճ>>, <<Բողաքարի>> արգելավայրեր,
- <<Դիլիջան>>ազգային պարկ>> ՊՈԱԿ- << Դիլիջան>>ազգային պարկ, <<Ախնաբադի կենու պուրակ>> արգելավայր,
- <<Սևան>>ազգային պարկ>> ՊՈԱԿ- << Սևան>> ազգային պարկ,<<Գիհու նոսրանտառային>> արգելավայր,
- <<Արգելոցապարկային համալիր>>ՊՈԱԿ-<<Էրեբունի>> պետարգելոց,<<Որդան կարմիր>> ,<<Ջերմուկի ջրաբանական>>,<<Հանքավանի ջրաբանական>> արգելավայրեր, 4 դենդրոպարկեր
- << Ջիկատար>> գիտափորձարարական կենտրոն>> ՊՈԱԿ-
- <<Ջիկատար>> արգելավայր
- <<Արփի լիճ>>ազգային պարկ>> ՊՈԱԿ- <<Արփի լիճ>>ազգային պարկ



23 года



•1987 թ.
•Անողնաշար կենդանիներ - 0 տեսակ
•Ողնաշարավոր կենդանիներ – 99 տեսակ
• Կաթնասուններ– 18 տեսակ
• Թռչուններ– 67 տեսակ
• Սողուններ – 11 տեսակ
• Երկկենցաղներ– 1 տեսակ
• Ոսկրային ձկներ– 2 տեսակ

2010 թ.
•Անողնաշար կենդանիներ– 155 տեսակ
• Փափկամարմիններ – 16 տեսակ
• Միջատներ – 139 տեսակ
•Ողնաշարավոր կենդանիներ– 153 տեսակ
• Կաթնասուններ– 29 տեսակ
• Թռչուններ– 96 տեսակ
• Սողուններ – 19 տեսակ
• Երկկենցաղներ– 2 տեսակ
•Ոսկրային ձկներ – 7 տեսակ

ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների ներկայացվածությունը ԲՀՊՏ-ներում

ՀՀ բույսեր և կենդանիներ	Տեսակների ընդհանուր թիվը	Տեսակների քանակը ԲՀՊՏ-ում	Տեսակները ԲՀՊՏ-ում (~%)
Գլխարկավոր սնկեր	40	33	85,2%
Բարձրակարգ բույսեր	452	166	36,7%
Անողնաշար կենդանիներ	155	95	61.3%
Ողնաշարավոր կենդանիներ	153	96	61.3%

Կարմիր գրքի կենդանիները Հայաստանի ԲՀՊՏ-ներում

	Տեսակների ընդհանուր թիվը	Տեսակների քանակը ԲՀՊՏ-ում	Տեսակները ԲՀՊՏ-ում (~%)
Դաս Փորոտանի փափկամարմիններ, Gastropoda	14	6	43
Դաս Երկփեղկ փափկամարմիններ	2	0	0
Դաս Միջատներ, Insecta	139	88	63
Անողնաշար կենդանիներ	155	94	61
Դաս Ոսկրային ձկներ, Osteichties	7	3	43
Դաս Երկկենցաղներ, Amphibia	2	0	0
Դաս Սողուններ Reptilia	19	17	89
Դաս Թռչուններ, Aves	96	71	74
Դաս Կաթնասուններ, Mammalia	29	24	83
Ողնաշարավոր կենդանիներ	153	115	75
Ընդամենը	308	209	68

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքներ



Լանդշաֆտային բազմազանության ներկայացվածությունը ԲՀՊՏ-ներում.

Լանդշաֆտներ	Ընդհանուր տարածքը /հա/	ՀՀ ընդհանուր տարածքի՝ /%/	ԲՀՊՏ համակարգում ընդգրկված /%/
Անտառային	110269,2	3,7	28.5
Լեռնամարգագետնային	87516,24	3,94	22,6
Տափաստանային	61391,7	2,06	15,8
Կիսանապատային	623,14	0,02	0,2
Ջրային տարածքներ	127254,08	4,28	32,9

ԲՀՊՏ-ների համակարգի զարգացումը

- ԲՀՊՏ-ների համակարգի զարգացումը կենսաբազմազանության պահպանության համար կիրառվող էկոհամակարգային մոտեցման նախապայման է: 2009 թվականից հետո Հայաստանի ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսը ավելացել է 88.6 հազար հեկտարով, որի արդյունքում ներկայումս այն կազմում է ավելի քան 387.0 հազ. հա կամ հանրապետության տարածքի շուրջ 13.1 %-ը:

ԲՀՊՏ համակարգի զարգացման նպատակը

Բնության հատուկ պահպանվող տարածքների կատարելագործված համակարգի ստեղծման միջոցով ապահովել.

- Հայաստանի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, պահպանության, վերականգնման և կայուն օգտագործման վիճակի բարելավումը,
- համակարգի ներդաշնակ ինտեգրացումը երկրի սոցիալ տնտեսական զարգացման ռազմավարությանը,
- բնության հատուկ պահպանվող տարածքների ցանցի համապատասխանեցումը միջազգային համաձայնագրերին, ստանդարտներին և չափանիշներին

Հայաստանի ԲՀՊՏ-երի ռազմավարությունը

- Հայաստանի ԲՀՊՏ-երի զարգացմանը և կառավարման բարելավմանը նպաստող սկզբունքները, մոտեցումները և գործողությունները ամրագրված են ՀՀ կառավարության 2014 թ. սեպտեմբերի 25-ի № 1059-Ա որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը>> փաստաթղթում:

ԲՀՊՏ-ների ռազմավարության առաջնահերթությունները.

- ԲՀՊՏ-ների վերաբերյալ օրենսդրության կատարելագործում.
- ԲՀՊՏ-ների կառավարման բարելավում և ինստիտուցիոնալ կապերի ամրապնդում,
- ԲՀՊՏ-ների համակարգում կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ներկայացվածության ապահովում:

- Հայաստանի ԲՀՊՏ-երի պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թթ. պետական ծրագրի ԲՀՊՏ-ների կառավարման համակարգի կատարելագործում բաժնում նախատեսված են ԲՀՊՏ-ներում զբոսաշրջության իրականացման կարողությունների հզորացում, ԲՀՊՏ-ների էկոհամակարգերի կողմից տրամադրվող ծառայություններից ստացվող օգուտների գնահատում, դրանց վերաբերյալ տեղական բնակչության շրջանակներում իրազեկության բարձրացում միջոցառումները, որոնք կապված են ԲՀՊՏ-ում էկոտուրիզմի զարգացման հետ:

Ծրագրերի շրջանակներում.

- Միջոցներ են ձեռնարկվում ԲՀՊՏ-ներում լանդշաֆտների և ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների ներկայացվածության բարձրացման ուղղությամբ:
- Հատուկ ուշադրություն է դարձվում տնտեսական հարցերին, մասնավորապես՝ ԲՀՊՏ-ների ինքնաֆինանսավորման ավելացմանը, տնտեսական գործունեության սահմանափակման դիմաց հողօգտագործողներին հատկացվող փոխհատուցումներին, ինչպես նաև նոր ԲՀՊՏ-ների ստեղծման նպատակով հողերի օտարման հարցերին:
- Կառավարման բարելավումը պահանջում է ԲՀՊՏ-ների գործունեության ավելի հստակ պլանավորում, տարբեր կատեգորիայի ԲՀՊՏ-ների համար կառավարման պլանների մշակում և այլն:

Կենսոլորտային պահպանավայրեր և էկոլոգիական ցանց

- Էկոլոգիական միջանցքների և պահպանման գոտիների շնորհիվ ԲՀՊՏ-ները կարելի է միավորել և ստեղծել էկոլոգիական ցանց.

  Տարբեր աստիճանի բնական և մարդածին ազդեցությունների ենթարկված ԲՀՊՏ-ները, ինչպես նաև էկոհամակարգերը և լանդշաֆտները կենսոլորտային պահպանավայրերի շրջանակներում կարող են միավորվել մեկ միասնական համալիրի մեջ:
- Կենսոլորտային պահպանավայրը միջազգային էկոլոգիական ցանցում կարող է ներառվել միջազգային կազմակերպությունների կանոնակարգերի և ընթացակարգերի համաձայն:

Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

ՀՀ բնապահպանության նախարարությունը համագործակցում է մի շարք միջազգային բնապահպանական կազմակերպությունների հետ (KFW, GIZ, WWF, CNF, TJS, UNDP և այլն)՝ իրագործելու համար ռազմավարության հետևյալ ուղղությունները՝

Կառավարման պլանների մշակում՝ գոյություն ունեցող և նախատեսվող պահպանվող տարածքների համար.

Առկա պահպանվող տարածքների նյութատեխնիկական բազայի հզորացում.

Նոր ՀՊՏ-ի ստեղծում

ԲՀՊՏ-ների համակարգում ընդգրկման ենթակա տարածքները.

- ԲՀՊՏ-ների առկա զբաղեցրած տարածքը անբավարար է: Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգում կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության բավարար ներկայացվածության ապահովման նպատակով նախատեսվում և իրականացվում են հետևյալ ԲՀՊՏ-ների ստեղծման աշխատանքները՝
- ,Ջերմուկե ազգային պարկ
- ,Տաթևե ազգային պարկ
- ,Իջևանի անտառայինե արգելավայր,
- ,Լոռու լճերե պահպանվող լանդշաֆտ.
- ,Գնիշիկե պահպանվող լանդշաֆտ.

Շնորհակալություն ուշադրության համար